



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1756

ՊՐԵԼՅՈՒԹԱԾՆԻՑ ՏՈՒՂԻ յԱրկիքների, ՄԻԱցե՛ց.

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Յ Ա Խ Ն Ի Ո Ւ Խ
Բ Ո Շ Յ Ո Ւ Բ Ի Մ Ա Ս Ի Ն

3K23

3PL-81

1932

ԵԿՐԵՎԱՆ

3K23

391-81

ԱՐ

202.

30 MAY 2005

Պրոֆեսարներ բանքը յերկիրների, միացեց

14 NOV 2008

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՅՈՒՆԻՉՈՒՄԻ ԲՐՈՂՅՈՒԹԻ ՄԱՍԻՆ

10.5-

ՀԵ

11 SEP 2013
1756

ՅԱԻՆԻՈՒԹԻՒՆ *) ԲՐՈՇԵՐՈՒԹԻՒ ՄԱՍԻՆ

Ահա վերջապես Գերժանիայում անլեզար կերպով, առանց հարժարվելու յանկերական ստոր գրաքննության, ըսւյս տեսավ սոցիալ-դեմոկրատական մի բրոշյուր, նվիրված պատերազմի հարցերին։ Հեղինակը, վորը ըստ յերևույթին պատկանում է կուռակցության «Ճախ-ուաղիկալ» թերին, սուսրաղբել և Յունիուս (վորը լատիներեն նշանակում է՝ կրտսեր) և իր բրոշյուրն անվանել և՝ «Սոցիալ-դեմոկրատիայի ճպնաժամը»։ Հավելվածում տպված են այն «թեզիսները միջադաշյին սոցիալ-դեմոկրատիայի խնդիրների մասին», վարոնք արդեն ներկայացվել են Բերնի Մ. Ա. Հ. ին (Միջազգային Սոցիալիստական Հանձնաժողովին) և տպված են նրա բյուլետենի Յ-րդ համարում։ Նրանք պատկանում են «Յնուերնացիոնալ» խմբին, վորը 1915 թ. դարնանը հրատարակել և այդ վերնագրով յուրնալի մի համար (Յեակինի, Մերինզի, Ա. Լուքսեմբուրգի, Տալլերմերի, Դունկերի, Շարերելի և այլոց հոդվածներով) և 1915—1916 թ. թ. ձեռու գումարել և Գերմանիայի բոլոր մասերի սոցիալ-դեմոկրատների խորհրդակցություն, վորն ընդունել և այդ թեզիսները։

Բրոշյուրը գրված է 1915 թ. ապրիլին, ինչպես ասում է Հաղինակը 1916 թ. հունվարի 2 թվակիր ներածության մեջ, և տպվել և առանց վորուեկ փոփոխության։ Այս բրոշյուրն ավելի առաջ հրատարակվելուն արդելք են հանդիսա-

*) Յամիւս—Ա. Լոււքսեմբուրգի կեղծանունն է։



4801
39

Թորգ. Վ. Բերգերանցուն, Խմբագրեց Դ. ՊԱՐԻՍ

Գետերտուի ազգաբան Արթուրեց Ա. Տ.-Մկրտչյան.
Գուղքը № 2905, Գլուխէտ № 7639ը, Հըստ. № 25, Տիրու 5000

Հանձնաժամ և արտադրության 25 սեպտ. 1:32 թ.
Առաջ. պետք 20 հսկու. 1932 թ.

ցել շարտաքին համուամտնքները»։ Բորչյուրը նվիրված է վոչ այնքան «սոցիալ-դեմոկրատիայի ճզնաժամին», վորքան պատերազմի վերլուծման, նրա պատարգական, աղդային բնույթի մասին յեղած առասպելի հերքման, այն բանի ապացուցման, վոր իմպերիալիստական պատերազմ և այդ թե՛ Գերմանիայի և թե՛ մյուս մեծ պետությունների կողմէց, այնուհետև՝ պաշտօնական կուսակցության վարժում-քի հեղափոխական ըննադատությանը։ Յունիուսի չափազանց աշխուժ զրված այս բրոցյուրը, անկասկած, խաղացել և և կիսադա խոչըր դեր բռուրդուազիայի և յունկերների կողմին անցած՝ Գերմանիայի նախկին սոցիալ-դեմոկրատական կուսակցության դեմ մղվող պայքարում, և մենք ի որտե վողջունում ենք հեղինակին։

Արտասահմանում 1914—1916 թ. թ. ոռուսկեն լույս տեսած սոցիալ-դեմոկրատական դրականության հետ ծանոթ ոռուս ընթերցողին Յունիուսի բրոցյուրը սկզբունքային վոչ մի նոր բան չի տալիս։ Յերբ կարդում ես այդ բրոցյուրը, համեմատելով գերմանական հեղափոխական մարքուսիսի փաստարկությունների հետ, —այն, ինչ վոր շարադրված ե, որինակ, մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի մանկֆեստում (1914 սեպտեմբեր-նոյեմբեր*), Բերնի բանաձևերում (1915 թ. մարտ**), և նրանց առթիվ յեղած բազմաթիվ մեկնաբանությունների մեջ, —դալիս ես միայն այն համոզման, վոր Յունիուսի փաստարկությունները շատ պակասավոր են և նա անում ե յերկու սխալ։ Հետաքա տողերը նվիրելով Յունիուսի թերությունների և սխալների քննադատության, մենք պետք ե հատկապես ընդոգնենք, վոր այդ անում ենք ի սեր մարքսիստների համար անհրաժեշտ ինքնազնադատության և այն հայացքների բաղմակողմանի ստուգման, վորոնք պետք ե ծառայեն գա-

զափարական բազա III ինտերնացիոնալի համար։ Յունիուսի բրոցյուրն ընդհանուր առմամբ մարզսիստական հիմնալի աշխատանք ե և միանդամայն հնարավոր ե, վոր նրա թերությունները մինչև վորոշ աստիճան կրում են պատահական բնույթ։

Յունիուսի բրոցյուրի գլխավոր թերությունը և ուղղակի մի քայլ հետ մինելը համեմատած լեզալ (թեև լույս տեսնելուց հետո իսկույն արգելված) «ինտերնացիոնալ» ժուրնալի հետ՝ հանդիսանում ե այն լուռթյունը, վոր պահպանում և հեղինակը սոցիալ-շուրջնիզմի՝ (հեղինակը չի գործածում վոչ այս տերմինը, և վոչ ել ավելի նվազ ճիշտ արտահայտությունը՝ սոցիալ-պատրիոտիզմ) ոպորտունիզմի հետ ունեցած կապի մասին։ Հեղինակը միանդամայն ճիշտ ե խոսում գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության «կապիտալացիայի» և կրախի մասին, նրա «պաշտոնական պարագլուխների» «դավաճանության» մասին, բայց դրանից գեղը չի անցնում։ Այնինչ «ինտերնացիոնալ» ժուրնալը ամել ե արգելն «կենտրոնի», այսինքն կառուցկիականության քննադատությունը, միանդամայն արդարացի կերպով ծաղրութանակի յենթարկելով նրա աննկարագիր բնույթը, մարքսիզմի պոռնկացումը նրա կողմից, լակեյությունը ոպորտունիստների իսկական գերը, հրապարակելով, որին նակ, այն կարևորագույն փաստը, վոր 1914 թ. ոգոստոսի 4-ին ոպորտունիստները յեկան ուլումատումով, պատրաստի վարույթով քվեարկելու համենայն գեպս վարկերի, ոգտին։ Վո՛չ Յունիուսի բրոցյուրում, վո՛չ թեզիսներում չի խոսվում վոչ ոպորտունիզմի, վո՛չ ել կառուցկիականության մասին։ Թեսրիապես սա ճիշտ չե, վորովհետև չի կարելի քայլատրել «դավաճանությունը», առանց գոտնելու նրա կապը ոպորտունիզմի հետ, վորպես մի ուղղության, վոր իր հետակառած ունի յերկար պատմություն, ամբողջ II ինտերնացիոնալի պատմությունը։ Այս սխալ ե գործնականապես քա-

*) Տես Յերկերի հ. XVIII, եջ 44—47 և 57—67, Խմբ։

**) Տես Յերկերի հ. XVIII, եջ 124—128, Խմբ։

զաքականապես, վորովհետև չի կարելի վոչ համեմատ «սուցիալ-դեմոկրատիայի ճգնաժամը», վոչ ել հաղթահարել այն, առանց պարզելու յերկու ուղղությունների—բացահայտ ոպղրտունիստականի (Լեդին, Դավիթ և այլն) և քողարկված ոպղրտունիստականի (Կառլեկի և Ընկ.) դերն ու նշանակությունը։ Այս մի քայլ հետ և համեմատած՝ որինակ, Ռատո Ռյուլեյի պատմական հոդվածին 1916 թ. հունվարի 12-ը «Vorwärts»-ում, վորտեղ նա ուղղակի, բացեիրաց ապացուցում և Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության պառակտաման անխուսափելությունը («Vorwärts»-ի խմբագրությունը պատասխաննեց նրան՝ կրկնելով կառուցկիական մեղրածոր և կեղծավոր Փրազները, չըտնելով ըստ ելյության վոչ մի փաստարկ այն բանի դեմ, վորարին կան յերկու կուսակցություններ և վոր նրանց հաշտեցնել չի կարելի)։ Այս՝ ապշեցուցիչ հերպով անհետեղական ե, վորովհետև «Բնտերնացիոնալի» 12-րդ թեզիսում խոսվում ե ուղղակի նոր ինտերնացիոնալ ստեղծելու անհրաժեշտության մասին, նկատի ունենալով «զեկավար յերկրների սոցիալիստական կուսակցությունների պաշտոնական ներկայացուցիչների» «դավաճանությունը» և «բուրժուական-իմպերիալիստական քաղաքականության հողի վրա անցնելը»։ Պարզ ե, վոր խոսել այն մասին, թե Գերմանիայի հին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, կամ Լեդինի, Դավիթի և Ընկ. հետ հաշտվող կուսակցությունը մասնակցելու յև «նոր» ինտերնացիոնալին, պարզապես ծիծաղելի յէ։

Ինչո՞վ ե բացատրվում «Բնտերնացիոնալ» խմբի այս մի քայլ հետը՝ մենք չդիտենք։ Ամբողջ հեղափոխական մարքումի մեծագույն թերությունը Գերմանիայում հանդիսանում ե կուռ անլեզար կաղմակերպության բացակայությունը, մի կաղմակերպություն, վոր տանում ե իր դիմք և դատիքակում ե մասսաներին նոր խնդիրների վագով, այլպիսի կաղմակերպություն կրավեր վորոշակի դիրք թի' ուղղու-

տունիզմի և թի' կառուցկիականության վերաբերմամբ։ Այդ առավել ևս անհրաժեշտ ե, վորովհետև դեմքանական հեղափոխական սոցիալ-դեմոկրատների ձեռքից այժմ խել են վերջին յերկու որաթերթերը—Յըկեմենի («Bremer Bürgerzeitung»*) և Բրաունշվեյգի («Volksfreund»**) վորոնք յերկուան ել անցել են կառուցկիականներին։ Միայն, «Գերմանիայի ինտերնացիոնալ սոցիալիստներ» (I. S. D. խումբը մնում ե իր պոստի վրա—պարզ և վորոշակի ամենքի համար։

«Բնտերնացիոնալ» խմբի միքանի անդամները, յերեսում ե, կրկին ընկել են անսկզբունք կառուցկիականության ճահճը։ Որինակ, Շտրենելը հասավ այսուել, վոր «Նեue Zeit»-ում բարեկի կանգնեց Յերնշտեյնի և Կառուցկու առաջ։ Խոկ նորերս, 1916 թ. ողոսասի 15-ին նա թերթերում զետեղեց մի հոդված—«Պացիֆիզմը և սոցիալ-դեմոկրատիան», վորով պաշտպանում ե կառուցկիական ամենաստափականցիիզմը։ Խոչ վերաբերում ե Յոմիսումին, նա ամենավճռական կերպով ըմբոստանում ե կառուցկիական պրոֆեկտորության դեմ՝ «զինաթափման», «զաղտնի դիվանագիտության վոչնչացման» և այնի վոզով։ Հնարավոր ե, վոր «Բնտերնացիոնալ» խմբում կա յերկու հոսանք—մեկը հեղափոխական և մյուսը տատանվող՝ կառուցկիականության կողմը։

Յունիուսի սխալ դրույթներից առաջինը ձևակերպված ե «Բնտերնացիոնալ» խմբի 5-րդ թեզիսում... Այդ անսանձ իմպերիալիզմի եպօխայում (երայում) այլևս չեն կարող լինել աղղային պատերազմներ։ Աղդային շահերը ծառայում են միայն վորպես խարեյության գործիք, վորպեսզի աշխատավոր ժողովրդական մասսաներն ի սպաս զբանի իրենց ժահացու թշնամուն՝ իմպերիալիզմին»... Այս դրույթով

*) «Յըկեմենի քաղաքացիական լրագիր»։ Խմբ.։

**) «Ժողովրդի բարեկամ»։ Խմբ.։

վերջացող 5-րդ թեզիսի ոկտոբեր նվիրված և տվյալ պատերազմի բնութագրությանը, վորպես իմպերիալիստական պատերազմի: Հնարավոր ե, վոր ազգային պատերազմների ժընտումը առհասարակ կամ անուշադրության արդյունք ե, կամ պատահական հրապուրանք՝ ընդգծելու միանդամայն ճիշտայն միտքը, թե տվյալ պատերազմը իմպերիալիստական և և, վոչ ազգային, բայց քանի վոր հնարավոր ե և հակառակը, քանի վոր ամեն տեսակի ազգային պատերազմների սխալ ժիտումը տվյալ պատերազմը անտեղի կերպով վորպես տէգային պատկերացնելու առթիվ՝ նկատվում ե զանազան սոցիալ-դեմոկրատների մոտ, ապա այս սխալի վրա չի կարելի կանոն չառնել:

Յունիուր միանդամայն իրավացի յե, յերբ ընդգծում և «իմպերիալիստական իրադրության» վճռական ազդեցությունը տվյալ պատերազմում, յերբ նա ասում ե, վոր Սերբիայի թիկունքում կանգնած ե Ռուսաստանը, «սերբական նացիոնալիզմի հետևում կանգնած ե ոռոսական իմպերիալիզմը», վոր, որինակ, զոլանդիայի մասնակցությունը պատերազմին նույնպես կլիներ իմպերիալիստական, վորովհետեւ նո, նախ, կպաշտպաներ իր գաղութները, և յերկրորդ, կղունար իմպերիալիստական կոռալցիաներից մեկնումեկի դաշնակիցը: Այս անվիճելի յե տվյալ պատերազմի վերաբերմամբ: Յեկ յերբ Յունիուր այսուեղ ընդգծում և հատկապես այն վերաբերությունը առաջարկության մեջ՝ ապահովական գործառությունը ընդգետ հակածեղափոխական միապետություների կուալիցիայի: Իսկ յերբ Նապոլեոնը ստեղծեց Փրանսական կուալիցիայի: Իսկ յերբ Նապոլեոնը ստրկացնելով Եվրոպայի բազմաթիվ վարչուց իմբեր կազմակերպված, խոչըր, կենսունակ ազգային պետություներ, այն ժամանակ Փրանսական ազգային պատերազմներից առաջացան իմպերիալիստական պատերազմներ, վորոնք իրենց հերթին ծնունդ տվին ազգային ազատական պատերազմների:

Սխալ կլիներ միայն չափազանցնել այդ ճշմարտությունը, չեղուել մարքսիստական պահանջից՝ կոնկրետ լինելու մասին, ներկա պատերազմի գնահատականը վերադրել իմպերիալիզմի որով հնարավոր բոլոր պատերազմներին, մոռանալ արդային շարժումներն ընդդեմ իմպերիալիզմի: «Աղ-

պային պատերազմներ այլևս չեն կարող լինել» թեզիսի պաշտպանության միակ փաստարկը հանդիսանում ե այն, վոր աշխարհը բաժանված ե մի բուռը իմպերիալիստական «մեծ» պետությունների միջև, վոր այդ պատճառով ամեն մի պատերազմ, թեկուզ և նա լինի սկզբում ազգային, վերածվում ե իմպերիալիստականի, դիմուլչելով իմպերիալիստական պետություններից կամ կուալիցիաներից մեկնումեկի շահերին (եջ 81 Յունիուրի մոտ):

Այս փաստարկի անձշտությունն ակներև ե: Հասկանալի յե, մարքսիստական դիալեկտիկայի հիմնական դրույթն այն ե, վոր բոլոր սահմանները բնության և հասարակության մեջ պայմանական են ու շարժում, վոր չկա վոչ մի յերեւույթ, վորը չկարողանար, վորոց պայմաններում, վերածվել իր հակադրության: Ազգային պատերազմը կարող ե վերածվել իմպերիալիստականի և հակառակը: Որինակ, Փրանսական մեծ հեղափոխության պատերազմները սկսվեցին վորպես աղդային և յիին այդպիսին: Այդ պատերազմները հեղափոխական եյին—մեծ հեղափոխության պաշտպանությունը ընդգետ հակածեղափոխական միապետությունների կուալիցիայի: Իսկ յերբ Նապոլեոնը ստեղծեոնը ստեղծեց Փրանսական կուալիցիայի: Իսկ յերբ Նապոլեոնը ստրկացնելով Եվրոպայի բազմաթիվ վարչուց իմբեր կազմակերպված, խոչըր, կենսունակ ազգային պետություններ, այն ժամանակ Փրանսական ազգային պատերազմներից առաջացան իմպերիալիստական պատերազմներ, վորոնք իրենց հերթին ծնունդ տվին ազգային ազատական պատերազմների:

Միայն սովորական կարող եր չնչել տարբերությունը իմպերիալիստական և ազգային պատերազմի միջև այն հիման վրա, թե մեկը կարող ե վերածվել մյուսին: Դիմուլչելու կան շատ անգամ ծառայել ե—նաև հունական փիլիսոփայության պատժության մեջ—կամուրջ դեպի սովորական թյունը: Բայց մենք մնում ենք դիմուլչելու կառավարելով սովորական

թյունների դեմ վոչ թե ժխտելով ամեն տեսակի վերածում-ների հնարավորությունը, այլ կոնկրետ վերլուծության յենթարկելով տվյալը իր իրադրության և իր զարգացման մեջ:

Վոր տվյալ 1914—1916 թ. թ. իմպերիալիստական պատերազմը կվերածվի ազգայինի, այլ վերին աստիճանի անհավանական ե, վորովհետեւ դեպի առաջ զարդացում ներկայացնող դասակարգը պրոլետարիատն ե, վորը որյեկտիվորեն ձգտում և վերածել այն քաղաքացիական պատերազմի ընուժեմ բուրժուազիայի, և հետո նրա համար, վոր յերկու կոպալիցիաների ուժերն այնքան ել նշանակելի չափով չեն արքերվում, և միջազգային Փինանսական կապիտալն ամենուրեք ստեղծել և ուսկցիոն բուրժուազիա: Բայց նման վերածումը անհնար հայտարարել չի կարելի. յեթե Յեվրոպայի պրոլետարիատը մի 20 տարի անզոր դուրս դար, յեթե ներկա պատերազմը վերջանար նապոլեոնական Հաղթանակների նման հաղթանակներով և մի շարք կենսունակ ազգային պետությունների ստրկացումով, յեթե արտայեվրոպական իմպերիալիզմը (յազոնականն ու ամերիկականը առաջին հերթին) նույնպես մի 20 տարի դիմանար, առանց անցնելու սոցիալիզմին, որինակ, յազոնա-ամերիկական պատերազմի հետևանքով, այն ժամանակ հնարավոր կլինեք ազդային թեծ պատերազմը Յեվրոպայում: Այդ կլինեք Յեվրոպայի զարգացումը դեպի եեւ միքանի տասնամյակով: Բայց այդ անհնար չե, վորովհետեւ պատկերացնել համաշխարհային պատմությունը, վոր ընթանում և առաջ հարթ ու սահուն, առանց յերբեմն հսկայական թոփչքների դեպի հետ, գիտեկտիկական չե, գիտական չե, թեորիապես սիսալ ե:

Այսուհետեւ, վոչ միայն հավանական, այլև անխուսափելի յեն իմպերիալիզմի եպոնիայում ազգային պատերազմները գալությունների և կիսադաշտականների կողմից: Գաղութներում և կիսազաղություններում (Զինաստան, Թյուրքիա, Պարսկաստան) ապրում ե մոտ 1000 միլիոն մարդ, այսինքն յերկրագների քսակչության կեսից ավելի: Ազգային-ազգատագրական շար-

ժումներն այսուեղ կամ արդեն չառ ուժեղ են, կամ աճում և հասունանում են: Ամեն մի պատերազմ քաղաքականության շարունակությունն ե այլ միջոցներով: Գաղութների աղգային-ազգատագրական քաղաքականության շարունակությունը անխուսափելիորեն կլինեն աղգային պատերազմները նրանց կողմից ընդդեմ իմպերիալիզմի: Այդպիսի պատերազմներ կարող են տանել դեպի այժմյան իմպերիալիստական «մեծ» պետությունների իմպերիալիստական պատերազմները, բայց կարող են և չտանել, այդ կախված ե շատ հանգամանքներից:

Արիսակ. Անդվան և Ֆրանսիան յոթնամյա պատերազմում պատերազմում եյին գաղութների համար, այսինքն մղում եյին իմպերիալիստական պատերազմ (վորը հնարավոր և և' սորեկության հիման վրա, և' պրիմիտիվ կապիտալիզմի հիման վրա, ինչպես և բարձր զարդացման հասած կապիտալիզմի ժամանակակից հիման վրա): Ֆրանսիան պարզված ե և կորցնում եր գաղութների մի մասը: Միքանի տարի անց սկսվեց Հյուսիս-Ամերիկյան Նահանգների աղգային-ազգատագրական պատերազմը մենակ Անդիայի դեմ: Ֆրանսիան և Սպանիան, վորոնք շարունակում եյին իրենք տիրապետել այժմյան Միացյալ Նահանգների՝ մասերին, մղված Անդիայի հանդեպ իրենց ունեցած թշնամությունից, այսինքն իրենց իմպերիալիստական շահերից, բարեկամական դաշներ են կնքում Անդիայի դեմ ապստամբած նահանգների հետ: Ֆրանսական զորքերն ամերիկականի հետ խփում են անդիայիներին: Մեր առաջն և ազգային-ազգատագրական պատերազմ, վորի մեջ իմպերիալիստական մըրցակցությունը հանդիսանում է պատահական, լուրջ նշանակություն չունեցող տարր, — հակառակ տյա բանի, վոր մենք տեսնում ենք 1914—1916 թ. թ. պատերազմում (ազգային տարրը ավտորո-սերբական պատերազմում չունի լուրջ նշանակություն՝ համեմատած ամեն ինչ վորոշող իմպերիալիստական մըրցակցության հետ): Այսուղից յե-

բեռամ և, վորքան անհեթեթ կլիներ կիրառել իմպերիալիզմ՝ հասկացողությունը շարլոն ձևով, յեզրակացնելով նրանից ազգային պատերազմների «անհնարինությունը»։ Որինակ, Պարոկաստանի, Հնդկաստանի և Չինաստանի միության ազգային-ազատազրական պատերազմը այս կամ այն իմպերիալիստական պիտության գեմ միանգամայն հնարավոր և և հավանական, վորովհետեւ նաև բղբում և այդ յերկների ազգային-ազատազրական շարժումից, ընդ վորում այդպիսի պատերազմի վերածումը իմպերիալիստական պատերազմի այժմյան իմպերիալիստական պիտությունների միջև՝ կախված կլինի բազմաթիվ կոնկրետ հանդամանքներց, վորոնց առաջացման մասին յերաշխավորելը ծիծաղելի կլիներ։

Յերրորդ, նույնիսկ Յեփրոպայում չի կարելի անհնարիամարել ազգային պատերազմները իմպերիալիզմի եպոխայում։ «Իմպերիալիզմի եպոխան» այժմյան պատերազմը դարձեց իմպերիալիստական, նաև անխուսափելիորեն ծնունդ կուա (քանի դեռ չի յեկել սոցիալիզմը) իմպերիալիստական նոր պատերազմների նաև ամրողապես իմպերիալիստական և դարձել այժմյան մեծ պետությունների քաղաքականությունը, բայց այդ «եպոխան» ամենեին չի բացառում ազգային պատերազմները, որինակ, փոքր (գեցուք, աննեկտիայի յենթարկված և ազգայնապես ճնշված) պետությունների կողմից ընդդեմ իմպերիալիստական պետությունների, ինչպես նաև չի բացառում նաև ազգային շարժումները մեծ մասշտաբով Յեփրոպայի արևելքում։ Ավստրիայի մասին, որինակ, Յունիուսը դատում և շատ առողջ, հաշվի առնելով վոչ միայն մենակ «տնտեսականը», այլև յուրատեսակ-քաղաքականը, նշելով «Ավստրիայի ներքին անկենունակությունը», ընդունելով, վոր «հարաբուրդյան միապետությունը բուրժուական պետության քաղաքական կազմակերպությունը չի, այլ միայն հասարակական պարագիտների միքանի խմբակցությունների թույլ շաղկապված սինդիկատ», և վոր «Ավստրո-Հունգարիայի վերացումը պատմականորեն հանդիսա-

նում և լոկ թյուրքիայի քայլայման շարունակությունը և դրա հետ մեկտեղ հանդիսանում և զարգացման պատմական պրոցեսի պահանջը»։ Ավելի լավ չեղաղությունների և նուսաստանի վերաբերմաք։ Ներկա պատերազմում «մեծ» պետությունների ուժասպառ լինելու պայմանով նաև, կամ նուսաստանում հեղափոխության հաղթանակի պայմանով՝ լիովին հնարավոր են ազգային պատերազմները, նույնիսկ հաղթական։ Իմպերիալիստական պետությունների միջամտությունը իրադրծելի յեղակոտիկայում վոչ բոլոր պայմաններում, այս մի կողմից։ Իսկ մյուս կողմից, յերբ դատում են «վայրիվերո», թե փոքր պետության պատերազմը հսկայի գեմ անհուսալի յեղ, ապա այստեղ պեաք և նկատել, վոր անհուսալի պատերազմը նույնպես պատերազմ և, և հետո, վորուշ յերևույթներ «հոկաների» ներսում—որինակ, հեղափոխության ոկտվելու կարող են «անհուսալի» պատերազմը գարձնել հուսալի։

Մենք մանրաման կանգ առանք իրը թե «այս ապաւյին պատերազմներ չեն կարող լինել» դրութի անձնության վրա վոչ միայն այն պատճառով, վոր այդ ակներու կիրազով սխալ և թեղողիապես։ Խորապես ցախալի կլիներ, իհարկե, յեթե «ձախերը» սկսելին անհոգություն ցուցաբերել գեղի մարքսիզմի թերթիան այնպիսի մի ժամանակ, յերբ III հնաբերնացիոնալի սաեղծումը հնարավոր և միայն չգուեհկացված մարքսիզմի հիման վրա։ Սակայն գործնական-քաղաքական տեսակետից նույնպես այդ սխալը շատ վնասակար և, նրանից յեզրակացնում են «պինաթափման» անհեթեթ պրոպագանդը, վորովհետեւ իրը թե վոչ մի պատերազմ, բացի ուսակցուն պատերազմներից, չի կարող լինել։ Դրանից յեղակացնում են ել ավելի անհեթեթ և ուղղակի ուսակցիոն անտարերերություն դեպի առգային շարժումը։ Նման անտարերերությունը գառնում և շովինիզմ, յերբ յեղական «մեծ» ազգերի, այսինքն՝ բարձաթիվ մասը և գաղութային ժողովուրդներին մեջող ազգերի անդամները

Հայտարարում են իրր թէ—զիտնական յերևույթով. «աղուային պատերազմներ այլևս չեն կարող լինել»! Աղուային պատերազմներ իմակերխալխտական պետությունների դեմ վոչ միայն հնարավոր և հավանական են, նրանք անխուսափելի և պրօքեսիլ հեղափոխական են, թեև, իշարկե, նրանց հաջողության համար պահանջվում ե կամ ճնշված յերկրների բնակիչների հոկայտական թիվ (հարյուրավոր միլիոններ մեր բնրած ջնդկաստանի և Զինաստանի՝ որինակով) ջանքերի միացումը, կամ միջազգային դրության պայմանների առանձնահատակ բարենպաստ դասավորությունը (որինակ, իմակերխալխտական պետությունների միջամտության անդամակուծումը նրանց ուժասպառության, նրանց պատերազմի, նրանց հակամարտության հետևանքով և այլն), կամ խոչըոր պետություններից մեկի պրոլետարիատի Միաժամանակ ապաստամբությունը բուրժուազիայի դեմ (մեր թված դեպքերից այս վերջինը հանդիսանում ե առաջինը պրոլետարիատի հաղթանակի համար նպաստավոր և ցանկալի լինելու տեսակետից):

Պետք ե նկատել, սակայն, վոր անարդարացի կլիներ մեղադրել Յունիուսին, թէ նա անտարեն ե դեպի աղուային շարժումը: Նա, դեթ, նշում ե սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի մեղքերի թվում նրա լուրջունը «գավաճանության» համար (անշուշտ պատերազմի առիթով ապսատամբության փորձի համար) կամերունի բնիկների պարագլուխներից մեկի մահապատճի առթիվ, ընդգծելով մի այլ տեղ (հատկապես պ. պ. Լեռինների, Լենչերի և նման սրիկաների համար, վորոնք համարվում են «սոցիալ-դեմոկրատ»), վոր գաղութային աղքերն ել աղդ են: Նա հայտարարում է լիակատար վորոշակիությամբ. «սոցիալիզմը ճանաչում ե յուրաքանչյուր ժողովրդի անկախության և ազատության, իր հակատագիրը ինքնուրույն կերպով անորինելու իրավունքը»: «միջազգային սոցիալիզմը ճանաչում ե ազատ, անկախ, իրավահաշառամար աղքերի իրավունքը, բայց միայն նա կարող է ստեղծել

այդպիսի աղքեր, միայն նա կարող է իրադործել ազգերի ինքնորոշման իրավունքը: Յեկ սոցիալիզմի այս լոգունդը—արդարացի կերպով նկատում ե հեղինակը—ծառայում է, ինչպես և բոլոր մյուսները, վոչ թէ արդարացնելու գոյություն ունեցողը, այլ վորածես ուղեցույց, վորածես մոլիչ պրուտարիստի հեղափոխական, կերպարանուփոխող, ակտիվ քաղականության» (եջ 77 և 78): Հետևաբար, խորապես կսխալվելին նրանք, վորոնք կվարծելին, թէ բոլոր գերմանական ձախ սոցիալ-դեմոկրատները ընկել են այն սահմանափակության, մարքսիզմի այն կարեկատուրայի մեջ, վորին հասել են հումանիզման և լեհական միքանի սոցիալ-դեմոկրատներ, ժխտելով աղքերի ինքնորոշումը նույնիսկ սոցիալիզմի որով: Ի գեպ, այս սխալի հոլանդական հատուկ աղբյուրների մասին մենք խոսում ենք մի այլ տեղ:

Յունիուսի մի այլ սխալ դատողությունը կապված է հայրենիքի պաշտպանության հարցի հետ: Այս քաղաքական կարգինալ հարց ե իմակերխալխտական պատերազմի ժամանակ: Յեկ Յունիուսն ամրապնդեց մեզ այն համոզման մեջ, վոր մեր կուսակցությունը տվել ե այդ հարցի միակ ճիշտ հարցադրումը—սլրուետարիատը դեմ և հայրենիքի սպաշտականության այս, իմակերխալխտական պատերազմում, Ակատիանության այս, իմակերխալխտական պատերազմում, Ակատիանությունը, Ակատի ունենալով նրա թարանչեական, սարկատիրական, ռեակցիոն բնույթը, Ակատի հանուն սոցիալիզմի նրան քաղաքացիական պատերազմ հակարգելու (և ձգտելու վերածել քաղաքացիական հատրականի) հնորավորությունը և անհատեաչությունը: Իսկ Յունիուսը, մի կողմէց, հիանալի կերպով գրսեցրել և տվյալ պատերազմի իմակերխալխտական քննոյթը, ի տարբերություն աղքայինի, իսկ մյուս կողմէց, ընկել և չափաղանց տարրինակ սիսալի մեջ, փորձելով քաշ տալ աղքային ծրագիրը և փակցնել տվյալ, վոչ աղքային պատերազմին: Հնչում ե այս զերծե անհավանական, բայց փաստ է: Պաշտոնական սոցիալ-դեմոկրատները, թէ՛ լեռինյան և թէ՛ կառցեկիական յերանգի, լակեյություն անելով բուր-

ժուազիային առջեւ, վորը ամենից ավելի յեր ճշում ոտար «արշավանքի» մասին, վորպեսզի խաբի ժողովրդական մասսաներին պատերազմի խմբերի խթանական ինույթի վերաբերմամբ, առանձին յեռանդով կրկնում ելին այդ փաստարկը «արշավանքի» մասին: Կառցեկին, վորն այժմ հավատացնում է միամիտ և դյուրահավատ մարդկանց (իմիջի այլաց ուսւառանյան ոկիստի*), Սպեկտատորի միջոցով), թե նա 1914 թվի վերջում անցել ե ոպողիցիայի կողմը, — շարունակում է հենվել այդ «փաստարկի» վրա! Աշխատելով հերքել այդ փաստարկը, Յունիուսը բերում է պատմական ուսանելի որինակներ պացուցելու համար, վոր «արշավանքը և գասակարգային պայքարը բուրժուական պատմության մեջ համառություն չեն, ինչպես ասում է պաշտօնական լեզենդը, այլ մեկը հանդիսանում է մյուսի միջոցը և դրսնորումը»: Արինակներ, Բուրբոնները Ֆրանսիայում առաջացրին ոտարերերյա արշավանք ընդդեմ յակոբինների, բուրժուաները 1871 թվին — ընդդեմ կոմունայի: Մարքը գրել է «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» աշխատության մեջ.

«Բարձրագույն հերոսական վերելքը, վորին գեռ ընդունակ եր հին հասարակությունը, ազգային պատերազմն ե, և նա այժմ դառնում է կառավարության ամենազուր խարդախությունը, այդ խարդախության միակ նպատակն է զառնում հետաձգել ավելի ուշ ժամանակ գասակարգային պայքարը, և յերբ գասակարգային պայքարը բռնկում է քաղաքացիական պատերազմի բոցով, խարդախությունը ջարդ ու փշուր է լինում»:

«Բոլոր ժամանակների կլասիկ որինուն ե — զգում և Յունիուսը, հիշատակելով 1793 թ., — Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը»: Այդ բոլորից յեղքակացված ե. «Դարավոր փորձը ցույց է տալիս, հետևաբար, վոր վոչ թե պաշարողա-

*) Ոկտոս բառը ծագում է «О. К.—Организационный комитет» բառից Ակիստ—«О. К.» յի հետեւը: Պանրամառն տես 6. ԽIX, ծանոթ. 24, Հայ իրատ, իմք.:

կան գըությունը, այլ անձնազոհ դասակարգային պայքարը: Վորը արթնացնում է ժողովրդական մասսաների արժանապատվությունը, հերոսությունը և բարոյական կորովը, հանդիսանում է յերկրի լավագույն պաշտպանությունը ընդդեմ արտաքին թշնամու».

Յունիուսի գործնական յեղքակացությունը. «Այս, սոցիալ-դեմոկրատները պարտավոր են պաշտպանել իրենց յերկրը պատմական մեծ կրիզիսի ժամանակ: Յեվ ույլատագի սոցիալ-դեմոկրատական Փրակցիայի ծանր հանցանքը հենց այն է, վոր նա հանդիսավոր հայուրաբեց 1914 թ. ոգուասուի 4-ի իր դեկլարացիայով. «Վտանգի ժամանելու մեջ անպաշտպան չենք թողնի մեր հայրենիքը», իսկ միննույն ժամանակ ուրացավ իր խոսքերը: Նա անպաշտպան բողեց հայրենիքը մեծապույն վտանգի պահին: Վորովհետեւ նրա առաջին պարտքը հայրենիքի հանդեպ այդ պահին հանդիսանում էր ցույց տալ հայրենիքին ներկա խմբերի խթանիքային պատերազմի իսկական աստանը, պատռել հայրենասիրական և գիվանապիտական ստի ցանցը, վորով պատված իր այդ հանդակորձը հայրենիքի հանդեպ, բարձր և վորովչակի հայտարարել, վոր գերմանական ժողովրդի համար այս պատերազմում հաղթանակը և պարտությունը հավասարապես կորուտարել են, մինչև ամենավերջին հնարավորությունը ընդդեմանալ հայրենիքի խեղդամահ անելուն պաշարողական դրության միջոցով, հոչակել ժողովրդին անհապաղ զինելու և նրան պատերազմի ու խաղաղության հարցը վճռելու իրավունք տալու անհրաժեշտությունը, ամենայն վճռականությամբ պահանջել ժողովրդական ներկայացուցչության պերմանենտ (անընդհատ) նիստը պատերազմի ամբողջ ընթացքում, ազակովելու համար ժողովրդական ներկայացուցչության արթուն վերահսկողությունը ժառավարության վրա և ժողովրդի վերահսկողությունը ժողովրդական ներկայացուցչության վրա, պահանջել բոլոր քաղաքական իրավասահմանափակումները վերացումը, վորովհետեւ

Ծանոթագրություն



միայն աղասու ժողովուրդը կարող և հաջողությամբ պաշտպանել իր յերկիրը. վերջապես, հակառակ պատերազմի իմպերիալիստական ծրագրին, —Ավստրիայի և Թյուրքիայի պահպանման ծրագրին, այսինքն Յելլոպահյում և Գերմանիայում ռեակցիայի պահպանման ձրագրին, —1843 թվի պատրիոտների և դեմոկրատների հին խկական-աղդային ծրագրիը, Մարքսի, Յնգելսի և Լասոսի ծրագրը—մեծ միասնական գերմանական համբաղետության լոգումը։ Այս եր այն դրույթ, վոր պետք և ծածանվեր յերկրի առջեւ, վորը կլիներ ճշմարիտ աղդային, ճշմարիտ-աղաստաղդական, համապատասխան կլիներ Գերմանիայի և պրոլետարիատի միջազգային գասակարգային քաղաքականության լավագույն տրադիցիաներին»... «Այսպիսով ծանր դիլեման հայրենիքի շահերի և պրոլետարիատի միջազգային համերաշխության միջև, վողերերդական կոնֆլիկտը, վորը դրդեց մեր պարզամենտականներին «Ճնշված որառվ» կանգնել իմպերիալիստական պատերազմի կողմը, —զուտ յերևակայություն և, բուրժուական-նացիոնալիստական Փիկցիա։ Բնդհակառակը, յերկրի շահերի և պրոլետարական ինտերնացիոնալի դասակարգային շահերի միջև գոյություն ունի թե՛ պատերազմի և թե՛ խաղաղության ժամանակ կատարյալ ներդաշնակություն։ Թե՛ պատերազմը և թե՛ խաղաղությունը պահանջում են գասակարգային պայքարի ամենաուժեղ զարդարումը, ոոցիալ-դեմոկրատական ծրագրի ամենավճռական պաշտպանությունը»։

Այսպես և բատում Յունիուսը։ Նրա դատողությունները սխալ լինելը աչք և ծակում, և յեթե ցարիզմի մեր գաղտնի և աշկարա լակեյները, պարոններ Պլեխանովը և Զիենկելին, գուցե և նույնիսկ պարոններ Մարտովը և Զիեյխեն, չարտինդությամբ կիառչեն Յունիուսի խորքերին, խորհելով վոչ թէ թեորիական ճշմարտության մասին, այլ այն մասին, վոր ճողովրեն, հետքերը ծածկեն, թող փչեն բանվորների աչքին, —աղաս մենք պետք և ավելի մանրամասն կանոտ առնելք

Յունիուսի սիսակի թեորիական աղբյուրների լուսաբանության վրա։

Նա առաջարկում է իմպերիալիստական պատերազմին «Հակառակել» ազգային ծրագիրը։ Նա առաջարկում և առաջավոր դասակարգին յերեսը դարձնել դեպի անցյալը, և վոչ թէ զեպի ապագան։ 1793 և 1848 թ. թ. և՝ Ֆրանսիայում, և՝ Գերմանիայում, և՝ ամբողջ Յելլոպահյում որյեկտիվորեն հերթի յեր դրված բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը։ Իրերի որյեկտիվ պատմական այս դրությանը համապատասխանում եր «խկական-աղդային» ծրագիրը, այսինքն՝ այն ժամանակվա դեմոկրատիայի աղդային-բուրժուական ծրագիրը, վորը 1793 թ. իրագործեցին բուրժուատ գիայի և պլեբեյության ամենահեղափոխական տարրերը, իսկ 1848 թ. Հոչակեց Մարքսը բովանդակ առաջավոր դեմոկրատիայի անունից։ Այն ժամանակ Փեողալական-դիմաստիական պատերազմներին հակառակում եյին, որյեկտիվորեն, հեղափոխական-դեմոկրատական պատերազմները, աղդային-աղաստաղդական պատերազմները։ Այդ եր եպօխայի պատմական խնդիրների բովանդակությունը։

Այժմ Յելլոպահյի առաջավոր, խոշորագույն պետությունների համար որյեկտիվ դրությունն այլ ե։ Զարդացումը դեպ առաջ—յեթե նկատի չոնեցվի հնարակոր, ժամանակավոր քայլերը դեպի հետ—իրագործելի յե միայն դեպի սոցիալիստական հասարակությունը, դեպի սոցիալիստական հեղափոխությունը։ Իմպերիալիստական-բուրժուական պատերազմին, բարձր զարդացման հասած կազիտալիզմի պատերազմին որյեկտիվորեն կարող և հակառակվել, դեպ առաջ զարգացման տեսակետից, առաջավոր դասակարգի տեսակետից, միայն պատերազմն ընդդեմ բուրժուադիայի, այսինքն ամենից առաջ պրոլետարիատի քաղաքացիական պատերազմը բուրժուադիայի դեմ հանուն իշխանության, մի պատերազմ, առաջ վորի չի կարող լինել լուրջ շարժում դեպ առաջ, և այնուհետեւ—միայն վորոց, հատուկ պայմաննե-

րում, հնարավոր և պատերազմը ի պաշտպանություն ոռցիալիստական պետության ընդդեմ բուրժուական պետությունների: Աւստրիայի բայլլէկիները (բարեբախտաբար հատուկնենտ և իսկույն մեր կողմից հանձնված պրիզիվականների*), Ուրունք պատրաստ ելին կանգնել պարմանական պաշտպանության—հայրենիքի պաշտպանության՝ Ռուսաստանում հաղթական հեղափոխության և հանրապետության հաղթանակի պայմանով—տեսակետի վրա, Հավատարիմ մեռցին բայլլէկիների տարին և դավաճաննեցին նրա վոգուն**), վորով-հետեւ ներս քաշվելով յերրոպական առաջավոր պետությունների իմպերիալիստական պատերազմի առարիսը, Ռուսաստանը հանրապետական ձևով ել կմղեր նույնպես իմպերիալիստական պատերազմ!

Առելով, վոր դասակարգային պայքարը լավագույն մի-

*) «Որչանակ իմբի կողմանիցներ Մանըաման տես հ. ԽԱ, ծանոթ, 39: Հայ կրտ. Խմբ:

**) Պայմանական պաշտպանողականության մեջ ընկած բայլիկիները: Յերբ հեղափոխական ճշնաժամը 1915 թ. աշնանը կուսակցության առաջ դրեց նրա տակտիկայի Հարցը առաջիկա հեղափոխության մեջ, պարզվեց, վոր կուսակցության վոչ բոլոր անդամները համաձայն են լինենյան «Միֆանի թիկինելի» հետ (տես Յերկերի հ. XVIII, էջ 311—314), վորոնք համարվում են պաշտպանել հանրապետական-չուղենիստների կառավարությունը: Այսպես որինակ, Մոսկվայում կար բայլլէկիների մի խումբ, վոր մտադիր եր հրատարակել մի որաթերթ, վորի ծրագրը կետերից մեկը լինելու յօր այս թիվով: «Ենթե մենք նվաճնեք գենուրատական հանրապետություն, հրաբրեալիթյան մեջ կմտնենք գերմանական պրոլետարիատի հետ խողագության համար պայքարելու նորուակալ, բայց յեթե նա հրաժարվի—զենքը ձեռին կուսատպանենք մեր պատությունը» («Պրոլետարական քաղաքացիության Նո 12/71, էջ 35): Լենինը խոսելով քեր կողմից անհապաղ պրիզիվականներին հանձնված բայլլէկիների մասին, հասկանում ե այն, մեծ մասամբ կուսակցության համար կորած բայլլէկիներին, վորոնք կամ պատերազմի սկզբին դնացն կամավոր պաշտպանելու ցենուրական ֆրանսիան», կամ կանոնելով Պէտականությի Փրանսատիրական սոցիալ-շուլլնեզմի տեսակետի վրա, նրանց հետ միասին մտան «պատերազմը մինչև վերջը» լոգունգի կողմնակից ուղ. և ուղ. միացյալ կազմակերպության մեջ: Խմբ.:

Հոյն և արշավանքի⁶⁾ դեմ, Յունիուսը միայն կիսով չափ կերպուց մարզոյան դիալեկտիկան, մի քայլ անելով ուղիղ ճանապարհով և իսկույն ևեթ շեղվելով նրանից: Մարզոյան դիալեկտիկան պահանջում է յուրաքանչյուր հատուկ պատմական կացության կրնկբետ վերլուծումը: Վոր դասակարգային պայքարը լավագույն միջոցն և արշավանքի դեմ,—այդ ճիշտ և և՛ բուրժուազիայի վերաբերմամբ, վորը տապարում ե ֆեոդալիզմը, և՛ պրոլետարիատի վերաբերմամբ, վորը տապարում ե բուրժուազիան: Հենց նրա համար, վոր այդ ճիշտ և ամեն տեսակի դասակարգային ճնշման վերաբերմամբ, այդ չափազնց ընդհանուր ե, ուստի և բավական չե տվյալ հատուկ դեպքի վերաբերմամբ: Քաղաքացիական պատերազմը բուրժուազիայի դեմ նույնպես դասակարգային պայքարի տեսակներից մեկն ե, և միայն դասակարգային պայքարի տվյալ տեսակը կապատեր Յեվրոպային (ամբողջը, և վոչ թե մի յերկիր) արշավանքների վտանգից: «Մեծ գերմանական հանրապետությունը», յեթե նա գոյություն ունենար 1914—16 թ., կմղեր նույնպիսի իմպերիալիստական պատերազմ:

Յունիուսը կիս մոտեցել և հարցի ճիշտ պատասխանին և այս ճիշտ լոգունդին. քաղաքացիական պատերազմը բուրժուազիայի դեմ հանուն սոցիալիզմի և, կարծես վախենալով ասել ամբողջ ճշմարտությունը մինչև վերջը, ինտ և դարձել, գեղի «ազգային պատերազմի» Փանտազիան 1914, 1915 և 1916 թ.: Յեթե հարցին նայենք վոչ թե տեսական, այլ զուտ գործնական կողմից, ապա Յունիուսի սխալը պակաս ակների չի դառնա: Գերմանիայի բուրժուազիան ամբողջ հասարակությունը, բոլոր դասակարգերը՝ ներառյալ գյուղացիությունը, պատերազմի կողմնակից ելին (Ուստաստանում, ամենայն հավանականությամբ, նույնպես—դեթ ունեոր և միջակ գյու-

6) Խոսքը վերաբերում է գրսի, ստարերկրյա արշավանքին:

Հայ. կրտ. Խմբ.:

դաշիության մեծամասնությունը չքավորության շատ զգալի մասի հետ միասին գտնվում եր, ըստ յերևույթին, բուրժուական իմպերիալիզմի հմայքի տակ) : Բուրժուազիան զինված եր մինչև առամեները : Նման գրության պարագայում «Հռչակել» հանրապետության ծրագիր, պերժանենա պարզամենտի ծրագիր, սպաների ընտրությունը ժողովրդի կողմից («Շողովրդի սպառապինումը») և այլն կնշանակեր գործնականում—«Հռչակել» ենդափոխություն (հեղափոխական սխալ ծրագրով!) :

Յունիուսը հենց այսուեղ, միանգամայն ճիշտ կերպով, առում ե, վոր հեղափոխություն քանի չի կարելի : Հեղափոխությունը հերթի յեր դրված 1914—1916 թ. թ., թագավորով պատերազմի խորքերում, անելով պատերազմից : Պատք եր «Հռչակել» այդ՝ հեղափոխական դասակարգի անունից, նշել մինչև վերջը, անվախ, նրա ծրագիրը—սոցիալիզմ, վորն անձնալ և պատերազմի եպօխայում տուանց քաղաքացիական պատերազմի ընդգեմ զեր-ունեակցիոն, վոճրագործ, ժողովրդին անասելի ազետների դատապարտող բուրժուազիի : Գետք եր մտածել սիստեմատիկ, հետևողական, պրակտիկ, հեղափոխական, կրիզիսի զարդարման ամեն մի տեմպի պարագայում պայպանան իրազարծելի դործողություններ, վորոնք գնում են հասունացող հեղափոխության դժով : Այդ գործողությունները նշված են մեր կուսակցության բանաձևում : 1) քվեարկություն վարկերի վեմ, 2) «քաղաքացիական խաղաղության» խորում, 3) անելուալ կազմակերպության ստեղծում, 4) զինվորների յեղքայրացում, 5) մասսանեցի հեղափոխական բոլոր յերկութներին աջակցություն*): Սյա բոլոր քայլերի հաջողությունը անխուսափելիքն կտանի զեպի քաղաքացիական պատերազմ :

Պատմական մեծ ծրագրի հռչակումը ունեցավ, անկասակած, հսկայական նշանակություն . միայն վոչ թե հին և 1914—16 թ. թ. համար հնացած ազգային գերմանական

ծրագրի, այլ պրոլետարական-ինտերնացիոնալ և սոցիալիստական ծրագրի : Դուք, բուրժուաներդ, կովում եք թալանի համար . մենք, բոլոր պատերազմոյ յերկրների բանվորներու՝ պատերազմ ենք հայուաբարում ձեզ, պատերազմ հանուն սոցիալիզմի, —ահա այն ճառի բովանդակությունը, վորով պետք ե հանդես գային 1914 թ. ողոստոսի 4-ի պարլամենտներում այն սոցիալիստները, վորոնք չեն գալաճանել սլուելարիատին, ինչպես Լեպինները, Դավիդինները, Կառուցկինները, Գլեխանովները, Գեղերը, Սամբաները և այլն :

Ըստ յերկույթին յերկու տեսակի անձիշա նկատառումներ կարող ենին պատճառ լինել Յունիուսի սիմալին : Յունիուսը, անտարակույս, վճռականորեն գեմ և իմպերիալիստական պատերազմին և վճռականորեն կողմնակից հեղափոխական տակտիկային . այդ փասորը չեն կարող ժխտել պ. պ. Պլեխանովների վոչ մի չարաշնորությունները Յունիուսի «արշտպանողականության» առթիվ : Այդ տեսակի հնարավոր և հավանական զրագարտություններին անհրաժեշտ ե պատասխանել մեկն և ուղղակի :

Բայց Յունիուսը, նախ, լիովին չի ազատվել գերմանական, նույնիսկ ձախ այն սոցիալ-դեմոկրատների միջավայրից, վորոնք վախենում, են պառակտումից, վախենում են մինչև վերջը արտասանել հեղափոխական լոգունդները*): Սիսալ վախ ե այդ, և Գերմանիայի ձախ սոցիալ-դեմոկրատները պիտի ազատվեն այդ վախից, և կազատվեն նրանից : Իսկ նրանք պայքարում են իրենց սոցիալ-շուլդնիստների դեմ վճռականորեն, հաստատ, անկեղծ, զրանումն ե նրանց հրա-

*) Նույն սիսալն ե Յունիուսի դատավորությանների մեջ հետեւյալ հարցում . վո՞րն ե լավը, հազմանակը, թե պարտությունը : Նրա յեղափառությունը՝ յերկուսն ել հայաստանական վատ են (ավերում, սպառողինումների անում, և այլն) : Հեղափոխական պրոլետարիատի տեսակետ չե այս, այլ պայմանական մասն-բուրժուազիի : Յեթե խոսենք պրոլետարիատի «հեղափոխական միջամտության» մասին—իսկ այդ մասին, թեև, դժբախտաբար, չափազանց ընդհանուր կերպով, խոսում ե և Յունիուսը և Շինտերնացիոնալ իմբի թեզիսները—ապա պար-

կայտական, սկզբունքային, արմատական տարրերությունը պէտք է առաջնայի գործությունը լինի և այն դրոշը, վորի վրա գըր-ված և վողջույն «բոլոր յերկրների լիբերալատներին», իսկ ժողովական ձեռքով քնքը որպէս են Զիններուն և Պոտրուն վիճակին!

Երկրորդ, Յունիուսը, ըստ յերեսութին, ուղեցել եւ իրագործել ինչ-վոր բան՝ նման մենչելիւան չարաբաստիկ «սուսադիաների թերիայի», ուղեցել եւ հեղափոխական ծրագրի կիրառումն սկսել նրա «ամենահարմար», «հանրամատչելի», մանր բուրժուազիայի համար ընդունելի ծայրից։ Ինչ-վոր բան՝ նման «սպամությունը խարելու», Փիլիստերին խարելու պլանին։ Ուղում եւ ասել, թե խոկական հայրենիքի լավագույն պաշտպանությանը վոչ վոք դեմ չի կարող լինել։ Խոկական հայրենիքը մեծ-դերմանական հանրապետությունն եւ, լավագույն պաշտպանությունը միլիցիան եւ, պերմանենտ պարլամենտը և այլն։ Մի անդամ ընդունվելով, նման մի ծրագիր ինքն իրեն, իրրև թե, կոաներ դեպի հետեւյալ սուսադիան—սոցիալիստական հեղափոխության սուսադիան։

Հավանականորեն, նման գասողություններ դիտակցար կամ կիսագիտակցար վորոշել են Յունիուսի տակտիկան։ Կարիք չկա ասելու, վոր դրանք սխալ են։ Յունիուսի բրոցուրում զգացվում եւ մենակ մարդը, վոր չունի լիզալ կազմակերպության ընկերներ, այնպիսի կազմակերպության, վորը սովորել եւ մտքի բովից անցկացնել հեղափոխական լողունդները և սիստեմատիկ կերպով դաստիարակել

տադիր եր հարցը դնել այլ տեսակետից։ 1) Հնարավո՞ր ե արդյոք «հեղափոխական կառավարություն» առանց պարտության սխալի։ 2) Հնարավո՞ր ե արդյոք խարազանել բուրժուալիսին և սխական յերկրի կառավարությանը, առանց միենույն սխակի, 3) մենք միշտ չե՞նք ասել և չե՞նք արդյոք սեակցիոն պատերազմների պատմական վորձը, վոր պարտությունները հեշտացնում են հեղափոխական դասակարգի զօրծը։

մասսային այդ լողունգների վորով։ Բայց այդ թերությունը —խորանգես սխալ կլիներ մոռանալ այդ—Յունիուսի անձնական թերությունը չե, այլ արդյունք բոլոր կողմերից կառցկիական կեղծավորության, իմաստակության, ոպորտունիստների հանդեպ «բարեկամագիան սիրո» ստոր ցանցով պատված գերմանական բոլոր ձախերի թուլության։ Յունիուսի կողմանական կարողացան, չնայած իրենց մենակության, ձեռնարկի անլիքալ թուլցիկների հրատարակման և սկսել պատերազմ կառցկիականության գեմ։ Նրանք կարողացան նաև գնալ առաջ ուղիղ ճանապարհով։

Գրված ե 1916 թ. սպոտություն,

Տպագրված ե 1916 թ. Խոկտեմբերին
«Социал Демократ» № 1 ժողովածուի
մեջ։

Ստորագրություն՝ Ն. Լենին։

Տպագրված ե բառ Յերկերի
2-րդ հրատ. տեխնի., հ. XIX,
իշ 176—190։



«Ազգային գրադարան



NL0178399

ԳՐԱՅԻ 20 Կ.

В. И. ЛЕНИН
О б р о ш ю р е Ю н и у с а
Партиздат 1932 Эривань